ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«01» սեպտեմբերի 2020թ.
No Ջ/18-3/14/023-2020

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գևորգյան,

Հայտնում եմ, որ ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 30-ի թիվ 1256-ն որոշմամբ Էջմիածին քաղաքի Նար-Դոս փողոցի թիվ 11 հասցեի վերակառուցված ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների, դրանց կատարման նկատմամբ տեխնիկական և հեղինակային հսկողության մատուցված ծառայությունների մնացորդային գումարների վճարումն իրականացնելու նպատակով հատկացվել է գումար՝ շինարարական աշխատանքների իրականացման համար 9,525,000 դրամ, տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար 380,000 դրամ, հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համար՝ 1,590,000 դրամ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վաչության կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտեում 2019 թվականին իրականացրած ՀՀ պետական բյուջեի ծախսերի իրականացմանն ուղղված գործունեության, արտաբյուջետային միջոցների գոյացման և օգտագործման ճշտության ստուգման արդյունքում արձանագրվել է, որ «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից կատարված աշխատանքների համար վճարվել է 2,178,600 դրամի ավել գումար:

Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ կապալառու «Ագարակ» ԲԲԸ-ին վճարվելիք գումարը կազմելու է 7,346,400 դրամ (9,525,000-2,178,600=7,346,400 դրամ):

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը՝ սահմանված կարգով վճարումներն իրականացնելու համար:

Առդիր՝ 1 ֆայլ

ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

X

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ ԱՐԹՈՒՐ ՎԱՆՑՅԱՆ

Կատարող՝ Գոռ Գևորգյան
ԳԿՎ շինարարական ծրագրերի
համակարգման բաժին
Հեռ./060/ 544-376

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am